



DOI: 10.59560/18291155-2026.2-104

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*«Արդշինբանկ» ԲԲԸ, իրավական հարցերի
գծով տնօրենության իրավախորհրդատու,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ամփոփագիր

ՀՀ իրավական համակարգում ներկայումս կան իրավահարաբերություններ, որոնց հանրային կամ մասնավոր բնույթի որոշումը տեսագործական բարդ խնդիր է: Այս խնդիրը ներկայումս փորձ է արվում հաղթահարել թե՛ օրենսդրական մակարդակում նախաձեռնված փոփոխությունների, թե՛ դատական պրակտիկայում ձևավորված մոտեցումների միջոցով: Հոդվածում քննարկել ենք այս խնդրի հիմքում ընկած բովանդակային գործոնները, անդրադարձել այս համատեքստում կատարված վերջին օրենսդրական փոփոխություններին ու դատական պրակտիկայի վերջին զարգացումներին, ներկայացրել առաջարկներ, որոնք, կարծում ենք, կարող են պայմանավորել որոշակիություն և ունենալ ուղենիշային դեր՝ յուրաքանչյուր դեպքում կասկածելի բնույթ ունեցող իրավահարաբերության էության ճիշտ ընկալման համար:

Հիմնաբառեր. հանրային և մասնավոր իրավահարաբերություններ, տարանջատում, օրենքով սահմանված հանրային գործառույթ, հանրային շահ, հետապնդած նպատակ:

1. Ընդհանուր դրույթներ

Ներկայումս ՀՀ իրավական համակարգում բախվում ենք իրավիճակների, երբ անհրաժեշտություն է լինում հստակ չափանիշների առանձնացմամբ իրականացնել հանրային ու մասնավոր իրավահարաբերությունների տարբերակում:

Մասնավոր և հանրային իրավունքի միջև տարբերակման գործընթացը սկիզբ է առնում դեռևս հռոմեական իրավունքից: Հռոմում մասնավոր իրավունքը վերաբերում էր անհատների շահերին, հանրային իրավունքը՝ հանրային մտահոգության

2. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների էության առանցքային ընկալմանն առնչվող հիմնադրույթներ

Եթե սահմանադրական, քրեական և քրեադատավարական իրավունքների՝ որպես հանրային նյութական և դատավարական իրավունքների տեսակների մասին խոսելիս մեծապես քննարկման առարկա են դառնում դրանց՝ որպես հանրային իրավունքի տեսակներով և մասնավոր իրավունքով պաշտպանվող շահերի

https://www.researchgate.net/publication/327282889_An_Expanding_Frontier_of_Administrative_Law_The_Public_Life_of_Private_Actors_in_European_Public_Law_24_no_3_2018_595-612/link/607ade4d881fa114b40c92fc/download?tp=eyJlb250ZXh0ljp7lmZpcnN0UGFnZSI6InB1YmtpY2F0aW9uIiwicGFnZSI6InB1YmtpY2F0aW9uIn19, 592:

հավասարակշռումը¹, ապա վարչական և վարչական դատավարության իրավունքների՝ կրկին որպես հանրային իրավունքի տեսակների մասին խոսելիս գործնականում քննարկման առարկա է դառնում քաղաքացիական և քաղաքացիադատավարական իրավահարաբերություններից դրանց տարանջատումը: Այսինքն, մի դեպքում խնդիրն արդեն իսկ հասկացված բնույթ ունեցող իրավահարաբերությունների շրջանակներում երկու կողմում հանդես եկող սուբյեկտների օրինական շահերի հավասարակշռումն է, մյուս դեպքում՝ հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատումը: Ուստի ցանկանում ենք ընդգծել, որ սույն աշխատանքը վերաբերելու է հանրային-իրավական և մասնավոր-իրավական այն հարաբերություններին, որտեղ պետք է քննարկվեն վարչական և քաղաքացիական իրավահարաբերությունների տարբերակմանն առնչվող խնդիրները:

Հարկ է նկատել, որ յուրաքանչյուր դեպքում տարանջատում պետք է կատարել իրավահարաբերության տարրերի՝ սուբյեկտների, օբյեկտի և բովանդակության համապարփակ դիտարկման արդյունքում: Միևնույն ժամանակ, գործնականում հարկ է նկատել, որ այնպիսի իրավիճակներում, երբ խնդրահարույց է իրավահարաբերության պատշաճ ընկալումը, պետք է առանցքային նշանակություն տալ իրավահարաբերության օբյեկտին՝ պաշտպանվող հասարակական հարաբերությանը, բովանդակությանը՝ դրա շրջանակներում կողմերի ունեցած իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև դրանց շրջանակներում իրավահարաբերության կողմերի հետապնդած նպատակին, այսինքն՝ առաջնահերթ պետք է շեշտադրվի ոչ թե այն հանգամանքը, թե ովքեր են իրավահարաբերության սուբյեկտները, այլ այն, թե ինչպիսի շահի պահպանությանը և (կամ) պաշտպանությանն ուղղված, ինչպիսի բովանդակություն ունեցող և ինչ նպատակ հետապնդող իրավահարաբերության ենք առնչվում:

Այս համատեքստում իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իրինա Ֆեդորովնա Կոլոնտաևսկայան նշում է, որ հանրային և մասնավոր իրավունքի միջև տարբերությունը որոշելիս նախ պետք է շեշտադրում կատարել այդ իրավահարաբերության շրջանակներում հետապնդվող շահի բնույթի վրա².

¹ Տե՛ս **Գագիկ Ղազինյան**, «Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սահմանադրական գաղափարի իրացումը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կարգավորումների համատեքստում»: «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2020 № 2 (32), էջ 3, հղումը՝ https://journals.y-su.am/bulletin-y-su-jurisprudence/hy/article/view/Vol.11_No.2_2020_pp.003-016 /հասանելի է 09.06.2026թ. դրությամբ/:

² Տե՛ս **Колонтаевская И.Ф.** Частное и публичное право: соотношение, взаимодействие, сближение // Вестник Московского университета им. С.Ю. Витте. Серия 2. Юридические науки, 2016, №1(8), - С. 34:



արդյունքում, հասկանալով գործ ունենք հանրային, թե մասնավոր շահի հետ, կհասկանանք նաև իրավահարաբերության բնույթը: Ռուս իրավագետը ևս նշում է, որ հանրային և մասնավոր իրավունքի տարանջատման չափանիշների հստակեցման խնդիրն առ այսօր շարունակում է մնալ իրավագետների ուշադրության կենտրոնում, սակայն միննույն ժամանակ ընդգծում է, որ դրանք փոխկապված են և մեկը պայմանավորված է մյուսով: Որպես դիպուկ օրինակ՝ Կոլոնտանսկայան նշում է, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 2-րդ հոդվածում «Մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք են» դրույթը մասնավոր շահը դնում է առաջին պլանում, այնուհետև նույն հոդվածը, ամրագրելով հանրային շահ մատնանշող դրույթ, սահմանում է, որ «մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանումն ու պաշտպանությունը պետության պարտականությունն է»¹: Այսինքն՝ մասնավոր շահի առկայությունը պայմանավորում է հանրային շահի առկայությունն ու հակառակը:

Համաձայնելով վերը նշված դատողության հետ՝ ամեն դեպքում հարկ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում իրավական վեճի բախվելիս պետք է ունենանք հստակ տարանջատում, որպեսզի կարողանանք լուծել այն:

3. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման համատեքստում առկա ներպետական և միջազգային դատական ակտերի վերլուծություն

Անդրադառնալով գործնական հարթությունում առկա հիմնախնդիրներին՝ նշենք, որ ներկայումս հաճախ է նկատելի լինում, որ միայն սուբյեկտների վրա շեշտադրում կատարելով փորձ է արվում միանշանակ պնդումներ անել առ այն, թե իրավական վեճը ինչ բնույթ ունի, կողմերն ինչ կարգավիճակով են հանդես գալիս, վեճը որ դատարանին է ընդդատյա և այլն:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ գործնականում առավել հաճախ հանդիպող խնդիրներից է այն, երբ իրավահարաբերության մի կողմում պետությունն է՝ հանձին որևէ պետական մարմնի: Այդպիսի իրավիճակներում կենտրոնանում ենք պետության՝ որպես հանրային իրավունքի սուբյեկտի վրա և առաջնորդվում այն կանխավարկածով, որ գործ ունենք հանրային-իշխանական լիազորությամբ օժտված կոնկրետ պետական մարմնի հետ, ով ներկայացնում է պետության շահերը. արդյունքում, կատարում ենք եզրահանգում, որ գործ ունենք հանրային իրավահարաբերության հետ: Սակայն հարկ է ընդգծել, որ հանրային իշխանական լիազորության կրող լինելը դեռևս չի նշանակում գործնականում միշտ հանրային իշխանական և հանրային շահին ուղղված լիազորություններ իրականացնել:

¹ Տե՛ս նույն տեղում:

Այսպես, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության՝ «Քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ) ու իրավաբանական անձինք են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքները»:

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է², որ այն մասնավոր իրավահարաբերություններում, որտեղ մի կողմում հանդես է գալիս պետությունը, վերջինիս նկատմամբ կիրառվում են քաղաքացիաիրավական օրենսդրությամբ իրավաբանական անձանց վերաբերելի կարգավորումները:

Ինչպես երևում է վերոգրյալից, պետությունը կարող է լինել ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր իրավունքի սուբյեկտ:

Այս առումով հարկ ենք համարում ներկայացնել իրավական վեճ, որի շրջանակներում պետությունը՝ հանձին պետական մարմնի, հանդես է եկել որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ:

Այսպես, օրինակ, թիվ ԼԴ/12260/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում³ ՀՀ Արդարադատության նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն, Հայցվոր), որպես մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում ծագած վեճով հայցվոր կողմ, պահանջել է, որպեսզի «Արկատ» ՍՊԸ-ից (այսուհետ նաև՝ Պատասխանող) հօգուտ Հայցվորի բռնագանձվի Պայմանագրի 5.2 կետով նախատեսված վճարման ենթակա՝ 99.875 ՀՀ դրամ տուգանքի գումար: Նյութաիրավական պահանջի հիմքում դրվել էր այն փաստական հանգամանքը, որ Պատասխանողը ոչ պատշաճ էր իրականացրել «Պետության կարիքների համար իրավական խորհրդատվության և դատական ներկայացուցչության ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-Ի ԽՆ-22/50,1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում իր կողմից կատարման ենթակա Պայմանագրով սահմանված ծառայությունները: Ըստ էության, տվյալ պարագայում Պայմանագրի շրջանակներում Նախարարությունը մասնավոր իրավահարաբերության շրջանակներում որպես կոնկրետ ծառայությունների

¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998 թ., ՀՕ-239, հոդված 1, մաս 2, հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=210215> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

² Տե՛ս նույն տեղում, հոդված 128, մաս 2:

³ Տե՛ս Ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԼԴ/12260/02/23 քաղաքացիական գործով 07.05.2024 թ. որոշումը, հղումը՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=30962247438366025 /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

մատուցման պատվիրատու կնքել է պայմանագիր, որի շրջանակներում հանդես է եկել որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ: Հարկ է ընդգծել, որ Նախարարության՝ որպիսի իրավահարաբերության սուբյեկտ հանդիսանալը որոշվել է իրավահարաբերության օբյեկտով և բովանդակությամբ: Բնականաբար, այսպիսի օրինակներ կան նաև միջազգային դատական պրակտիկայում: Օրինակ, ԱՄՆ Գերագույն դատարանը *Republic of Argentina v. Weltover* գործի շրջանակներում՝ արձանագրել է, որ Արգենտինան, թողարկելով պարտատոմսեր, հանդես էր գալիս որպես մասնավոր սուբյեկտ: Այսպես, Արգենտինայի Հանրապետությունը թողարկել էր պարտատոմսեր, որոնց վճարումները նախատեսված էին նաև Նյու Յորքում: Ֆինանսական ճգնաժամի պայմաններում պետությունը միակողմանիորեն երկարաձգեց այդ պարտատոմսերի մարումը: Պարտատոմսերի տերերը դիմեցին ԱՄՆ դատարան՝ պահանջելով վստահության հատուցում: Պետությունը պնդում էր, որ իր գործողությունները ենթակա չեն ԱՄՆ դատարանների քննությանը, քանի որ այն գործում է որպես սուվերեն իշխանություն և օգտվում է *Foreign Sovereign Immunities Act (FSIA)*-ով նախատեսված իմունիտետից: Սակայն հարկ էր նկատի ունենալ, որ պարտատոմսերի թողարկումն ու դրանց մարումը բնույթով առևտրային գործունեություն են: Գերագույն Դատարանն ընդգծեց, որ այն դեպքերում, երբ պետությունը շուկայում հանդես է գալիս որպես պայմանագրային կողմ, այն գործում է ոչ թե որպես հանրային իշխանության կրող, այլ որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ: Մեկ այլ՝ *Trendtex Trading Corp. v. Central Bank of Nigeria*, գործի շրջանակներում² ևս զարգացվել է այս տրամաբանությունը: Մասնավորապես, *Trendtex Trading* բրիտանական ընկերությունը պայմանագիր էր կնքել Նիգերիայի Կենտրոնական բանկի հետ՝ ցեմենտի մատակարարման վերաբերյալ: Բանկը չկատարեց իր պայմանագրային պարտավորությունները, և հարց առաջացավ՝ արդյոք հնարավոր է Նիգերիայի Կենտրոնական բանկի դեմ դատական հայց ներկայացնել Անգլիայի դատարաններում: Կենտրոնական բանկը պնդում էր, որ այն հանդիսանում է պետական մարմին, հետևաբար օգտվում է պետական իմունիտետից: Անգլիայի և Ուելսի Վերաքննիչ դատարանն արդյունքում եզրակացրեց, որ Կենտրոնական բանկի գործողությունները պայմանագրային էին և առնչվում էին առևտրային գործունեությանը և տվյալ պարագայում չէր կարող քննարկման առարկա դառնալ պետական մարմնի բացառիկ իմունիտետ ունենալու հարցը: Դատարանը հաստատեց, որ պետությունը և պետական մարմինները չեն կարող անսահմանափակ կերպով օգտվել իմունիտետից, Կենտրոնական բանկը տվյալ պարագայում, չնայած պետական մարմին լինելուն, հանդես էր գալիս որպես մասնավոր՝ մասնավորապես, պայմանագրային իրավահարաբերության սուբյեկտ:

¹ Տե՛ս *Republic of Argentina v. Weltover, Inc.*, 504 U.S. 607 (1992):

² Տե՛ս *Trendtex Trading Corp. v. Central Bank of Nigeria* [1977] QB 529 (CA):

Այժմ քննարկման առարկա դարձնենք իրավիճակներ, որոնց պարագայում իրավահարաբերության երկու կողմում «դե ֆակտո» հանդես են գալիս մասնավոր իրավունքի սուբյեկտներ, սակայն իրավահարաբերության շրջանակներում պաշտպանվող հասարակական հարաբերության բնույթով պայմանավորված՝ վեճը քննության առարկա է դառնում Վարչական դատարանում:

Այս համատեքստում հարկ ենք համարում քննարկման առարկա դարձնել ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործը, որի շրջանակներում Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության էր ենթարկել ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբաններից մեկին, այնուհետ կայացված որոշումը բողոքարկման առարկա էր դարձել դատական կարգով: Ըստ էության, հարց է առաջանում առ այն, թե ինչ բնույթի իրավական վեճի հետ ենք առնչվում: Արդյոք այն ծագել էր մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում և արդյոք կայացված որոշումը եղել էր ի նպաստ մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման: Նախ ընդգծենք այն հանգամանքը, որ ՀՀ փաստաբանների պալատը պետական մարմին չէ: Այն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է¹:

Հարց է առաջանում առ այն, թե կարող ենք գործնականում առնչվել հակառակ տրամաբանությանը, մասնավորապես, ունենանք այնպիսի իրավիճակ, որ ոչ առևտրային կազմակերպությունը կոնկրետ իրավիճակում ունենա հանրային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնկրետ դեպքում իրականացնում է հանրային շահի պահպանությանն ուղղված գործառույթ: Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) 2022 թ. թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով կայացրել է նախադեպային բնույթ ունեցող որոշում², որով արձանագրել է, որ հանրային իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության: Վճռաբեկ դատարանը, ամփոփելով նախկին դիրքորոշումները, կրկին ընդգծել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման

¹ Տե՛ս «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 1, ՀՕ-29-Ն, ընդունվել է 14.12.2004 թ., հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/110603> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի՝ թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով 21.06.2022 թ. որոշումը, հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/164483> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները:

Տվյալ դեպքում փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը պատկանում են հանրային իրավունքին, քանի որ դրանք փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելը լիազորում են բացառապես Պալատին, որն այդ գործառույթն իրականացնում է հոգուտ հանրային շահի: Ըստ էության, յուրաքանչյուրի՝ սահմանադրորեն երաշխավորված որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումն ուղղված է հանրային շահի սպասարկմանը, ուստի նշված գործառույթի իրականացման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն ունեն հանրային բնույթ:

Հաջորդիվ անդրադառնալով իրավահարաբերության մասնակիցների միջև ենթակարգության-վերադասության առկայությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Պալատ-փաստաբան հարաբերությունները բնորոշվում են նաև ցանկացած մասնավոր, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք հանդիսացող գործարքի (պայմանագրի) բացակայությամբ: Պալատի խորհրդի կողմից փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը կայացվում է Պալատի հանրային իշխանական լիազորությունների գործադրման արդյունքում և միակողմանի ազդեցություն է ունենում հասցեատեր հանդիսացող փաստաբանի համար:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում անհրաժեշտ է լրացնել Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ընդգծելով, որ հանրային իրավահարաբերություններում որպես հանրային իշխանության կրող կարող են հանդես գալ ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետության կողմից օրենքով պատվիրակված հանրային գործառույթ իրականացնող մասնավոր անձինք:

Ըստ էության, վերոգրյալի համատեքստում կարող ենք արձանագրել, որ հանրային իրավահարաբերությանն առնչվելու հանգամանքը արձանագրելու համար էականը ոչ թե մի կողմի՝ պարտադիր պետության՝ հանձին որևէ պետական մարմնի հանդես գալն է, այլ կոնկրետ իրավիճակում մի կողմի՝ օրենքով վերապահված հանրային գործառույթի իրականացումը՝ ուղղված հանրային շահի պաշտպանությանը և (կամ) պահպանմանը:

Այս համատեքստում հիշատակման է արժանի նաև *Mateescu v. Romania* գործը¹, որի շրջանակներում բժիշկ Միրչա Մատեսկուն, ավարտելով իրավաբանական

¹ *St'u Mateescu v. Romania*, Application no. 1944/10, Judgment of 14 January 2014:

Ֆակուլտետը, փորձեց փաստաբանական գործունեությամբ զբաղվել, բայց Բուխարեստի փաստաբանական պալատը արգելեց նրան համատեղել բժշկի և փաստաբանի մասնագիտությունները: ՄԻԵԴ-ը գտավ, որ այդ արգելքը անհամաչափ է և խախտում է դիմողի մասնագիտական ազատությունը: ՄԻԵԴ-ը հատուկ ընդգծել է, որ Բուխարեստի փաստաբանական պալատը («Bucharest Bar») իրականացնում է հանրային գործառույթ: Վեճն իր բնույթով հանրային-իրավական էր, փաստաբանական պալատը տվյալ պարագայում իրականացնում էր պետության կողմից պատվիրակված գործառույթ, որն առաջացնում էր հանրային-իրավական հետևանքներ: Պալատն էր որոշում, թե տվյալ պետությունում ով կարող է զբաղվել փաստաբանական գործունեությամբ. փաստացի կոնկրետ խումբ անձանց համար որոշվում էր մասնագիտական կոնկրետ գործունեությամբ զբաղվելու հարցը: Վճռում նշվում է, որ փաստաբանական պալատը իրականացնում է հանրային գործառույթներ և այդ պատճառով նրա որոշումները պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին:

Գործնականում այսօր նաև բավական կարևորում ենք այն հանգամանքը, որ եթե պետական մարմինը գրանցում է որևէ փաստ և դրա շրջանակներում առաջանում է իրավական վեճ, ապա միայն այն փաստի ուժով, որ գրանցումը եղել է պետական մարմնի կողմից, դեռևս չի նշանակում, որ միանշանակ կարող ենք անդել, որ գործ ունենք հանրային-իրավական բնույթի վեճի հետ:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ Վճռաբեկ դատարանի մեկ այլ կարևոր որոշման: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը ՎԴ/1621/05/14 վարչական գործով¹ անդրադարձել է ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և «Ապրանքային նշանների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով այդ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու հայցապահանջների հիման վրա հարուցված գործի ընդդատության հարցին: Գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը): Դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ

¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով 22.04.2016 թ. որոշումը, հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/107620/_hասանելի_է_09.06.2026թ._դրությամբ/:

իրավահարաբերությունը հանրային բնույթի է: Քննարկման առարկա սույն իրավիճակում ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և դրա գրանցումը չեղյալ հայտարարելու հետ կապված իրավական վեճը ծագում է մի կողմից՝ ապրանքային նշանի իրավատիրոջ (կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձի), իսկ մյուս կողմից՝ ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և դրա գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի միջև: Թեև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գրասենյակն իրականացնում է օրենսդրությամբ իրեն վերապահված ապրանքային նշաններին պահպանություն տրամադրելու հետ կապված գործառույթները, սակայն վերջինս խնդրո առարկա իրավահարաբերությունների շրջանակներում որպես կողմ հանդես չի գալիս. փաստացի, վեճը ծագում է ապրանքային նշանի իրավատիրոջ (կամ դրա օգտագործման իրավունք ունեցող անձի) և ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և դրա գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջով դատարան դիմած շահագրգիռ անձի միջև: Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ապրանքային նշանի օգտագործման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և ապրանքային նշանի գրանցումը չեղյալ հայտարարելու պահանջների հիման վրա հարուցված գործերը չեն բխում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճից և ընդդատյա չեն վարչական դատարանին: Նշված գործերը բխում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող վեճից և ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանին:

4. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատմանը վերաբերելի հիմնական օրենսդրական զարգացումները

Արձանագրելով դատական մեկնաբանման միջոցով իրավական տարընկալումները հաղթահարելու կարևորությունը՝ ընդգծենք նաև, որ կարևոր, ավելին, առաջնահերթ է հանրային ու մասնավոր իրավահարաբերությունների տարանջատմանն ուղղված աշխատանքներ տանել օրենսդրական դաշտում, քանի որ այսօր մեր իրավական համակարգում կա դրա անհրաժեշտությունը:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ արդեն իսկ կատարված մի քանի ողջունելի օրենսդրական փոփոխությունների. դրանք մեր կարծիքով տեղին են և հիմնված կոնցեպտուալ ճիշտ ընկալումների վրա: Մեր կողմից քննարկման առարկա առաջին օրենսդրական փոփոխությունը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության՝ աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող իրավակարգավորումներին:

Արդյունքում, 2024 թվականի մայիսի 2-ին երկրորդ ընթերցում անցած և ամբողջությամբ ընդունված՝ «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքով՝ ուժը կորցրած ճանաչվեց Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որով ամրագրվում էր, որ ի թիվս հանրային իրավահարաբերություններից բխող այլ վեճերի, վարչական դատարանին ընդդատյա են նաև հանրային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատվելու հետ կապված աշխատանքային վեճերը, զուգահեռաբար ՀՕ-222-Ն օրենքով² ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, ինչի արդյունքում ամրագրվեց, որ հանրային ծառայության անցնելու, իրականացնելու ու ծառայությունից ազատվելու վերաբերյալ աշխատանքային իրավահարաբերություններից ծագած վեճերը դառնում են ընդդատյա ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին: Արդյունքում, օրենսդրական այս փոփոխություններն ամրագրեցին այն ընդունելի մոտեցումը, որ որպես իրավական վեճի առանցք պետք է դիտարկել ոչ թե վեճի սուբյեկտներից մեկի՝ որպես կանոն հանրային իրավունքի սուբյեկտ լինելու հանգամանքը, այլ վեճի շրջանակներում պաշտպանության ենթակա օրինական շահերի բնույթը:

² Տե՛ս «ՀՀ բաղաբացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-222-Ն, ընդունվել է 02.05.2024 թ., ստորագրվել է 17.05.2024 թ., ուժի մեջ է մտել 01.01.2025 թ., հղումը՝ <https://www.arlis.am/hy/acts/192978> /հասանելի է 09.06.2026 թ. դրությամբ/:

Կարևոր էր նաև նոտարական գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերով նոր օրենսդրական փոփոխությունների ամրագրումը:

Մասնավորապես, 2024 թվականի մայիսին ուժի մեծ մտած օրենսդրական փոփոխություններով¹ ուժը կորցրած ճանաչվեց նաև Վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 31-րդ գլուխը և միաժամանակ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում ավելացավ նույնանուն վերտառությամբ 27.3-րդ գլուխ:

Ըստ էության, այս փոփոխությամբ ամրագրվեց այն տրամաբանությունը, որ ոչ թե որպես առանցք պետք է դիտարկել նոտարի՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություն իրականացնող անձ դիտարկվելու հանգամանքը, այլ այն, թե ինչի շրջանակներում է մատուցվում ծառայությունը, ինչ բնույթի իրավահարաբերությունների կարգավորմանն է ուղղված այն:

5. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալ ողջ վերլուծությունը՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակում իրականացնելիս առաջնահերթ պետք է առաջնորդվել իրավահարաբերության բնույթով, իրավահարաբերության շրջանակներում պաշտպանվող օրինական շահով,
2. մասնավոր իրավունքի սուբյեկտների միջև ծագած իրավական վեճը կարող է ենթակա լինել Վարչական դատարանի իրավասությանն այն դեպքում, երբ դրանցից առնվազն մեկին օրենքով վերապահված է հանրային շահի ապահովմանն ուղղված գործառույթ և վեճը ծագել է այդ գործառույթի իրացման շրջանակներում,
3. վարչական կամ այլ հանրային լիազորություններով օժտված լինելու հանգամանքն ինքնին բավարար չէ վեճը վարչական դատարանի իրավասությանը վերագրելու համար. վճռորոշ է այն հանգամանքը, որ տվյալ լիազորություններն ուղղված լինեն հանրային շահի իրացմանն ու իրականացվեն դրա սպասարկման նպատակով,
4. հաշվի առնելով գործնականում հանրային իրավահարաբերությունների շրջանակի ճիշտ ընկալման կարևորությունը՝

¹ Տե՛ս նույն տեղում:



առաջարկում ենք ներպետական օրենսդրությամբ ամրագրել «հանրային շահի ապահովմանն ուղղված հանրային գործառույթ» հասկացությունը՝ առանց սպառիչ սահմանման, փոխարենը նախատեսելով հիմնական հատկանիշները, որոնց համակցված առկայությունը կարող է պայմանավորել համապատասխան իրավահարաբերության բնույթի ճիշտ իրավական որակումը:

4.1. Այս համատեքստում առարկվում է օրենսդրական համակարգում ներդնել հետևյալ դոկտրինալ բնորոշումը.

«Հանրային շահի ապահովմանն ուղղված հանրային գործառույթ է համարվում օրենքով ամրագրված, հանրային նշանակություն ունեցող գործառույթը, որը կարող է իրականացվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև օրենքով լիազորված մասնավոր իրավունքի սուբյեկտի կողմից՝ օրենքով սահմանված կարգով, և ուղղված է հանրային շահի իրացման, պահպանման կամ պաշտպանության ապահովմանը»:

Օգտագործված գրականություն

Նորմատիվ իրավական ակտեր

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ., ՀՕ-239:
2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 14.12.2004թ., ՀՕ-29-Ն,
3. «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-220-Ն, ընդունվել է 02.05.2024 թ.:
4. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-222-Ն, ընդունվել է 02.05.2024 թ.:

Դատական պրակտիկա

1. ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԼԴ/12260/02/23 քաղաքացիական գործով 07.05.2024 թ. Որոշում:
2. ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի թիվ ԵԴ/38635/02/19 քաղաքացիական գործով 21.06.2022 թ. Որոշում:
3. ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով 22.04.2016 թ. Որոշում:
4. *Republic of Argentina v. Weltover, Inc.*, 504 U.S. 607 (1992).
5. *Trendtex Trading Corporation v. Central Bank of Nigeria* [1977] QB 529 (Court of Appeal).
6. *Mateescu v. Romania*, Application no. 1944/10, Judgment of 14 January 2014.

Գիտական գրականություն

7. **Ավետիսյան Վ.**, «Մասնավոր իրավունքի զարգացման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Բանբեր Երևանի համալսարանի, 2019, № 3 (30):

8. **Ղազինյան Գ.Ս.**, «Հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սահմանադրական գաղափարի իրացումը ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կարգավորումների համատեքստում»: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, 2020, № 2 (32):

9. **Колонтаевская И.Ф.** Частное и публичное право: соотношение, взаимодействие, сближение // Вестник Московского университета им. С.Ю. Витте. Серия 2. Юридические науки, 2016, № 1 (8).

10. **Barnes J.**, An Expanding Frontier of Administrative Law: The Public Life of Private Actors (A Functional Approach), European Public Law, Vol. 24, No. 3, 2018, pp. 595–612,

11. **Merrill T.W.**, Private and Public Law. In: Gold A. S., Goldberg J. C. P., Kelly D. B., Sherwin E., Smith H. E. (eds.), The Oxford Handbook of the New Private Law. Oxford: Oxford University Press, 2020, Chapter 35. DOI: 10.1093/oxfordhb/9780190919665.013.35.

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗГРАНИЧЕНИЯ ПУБЛИЧНЫХ И ЧАСТНЫХ ПРАВООТНОШЕНИЙ

Аннотация

В настоящее время в правовой системе Республики Армения существуют правоотношения, определение характера которых - публичных или частных - является сложной теоретической и практической проблемой. Эта проблема в настоящее время решается посредством инициированных на законодательном уровне изменений и сформировавшихся в судебной практике подходов. В статье рассмотрены содержательные факторы, лежащие в основе данной проблемы, рассмотрены последние законодательные изменения в этом контексте и последние события в судебной практике, а также представлено предложение, которое, по нашему мнению, может внести определенность и стать ориентиром для правильного понимания сути правоотношения, имеющего сомнительный характер в каждом конкретном случае.

Ключевые слова: публичные и частные правовые отношения, разграничение, публичная функция, определенная законом, публичный интерес, преследуемая цель,

CONTEMPORARY ISSUES IN THE DELINEATION OF PUBLIC AND PRIVATE LEGAL RELATIONS

Annotation

Currently, in the legal system of the Republic of Armenia, there are legal relations, the determination of which as public or private in nature is a difficult theoretical and practical problem. This problem is currently being overcome through changes initiated at the legislative level and approaches formed in judicial practice. In the article, we have discussed the substantive factors underlying this problem, reviewed the latest legislative changes made in this context and the latest developments in judicial practice, and presented proposals that, in our opinion, can provide certainty and play a guiding role for the correct perception of the essence of a legal relationship that is of a dubious nature in each case.

Keywords: public and private legal relations, separation, public function defined by law, public interest, pursued goal.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 22.06.2026 թ., տրվել է գրախոսության 23.06.2026 թ., ընդունվել է տպագրության 26.06.2026 թ.: